

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱ /8-րդ դասարան - Խնդիրներ 1/

1. Եթե հնգանիշ թվին ձախից կցագրենք 4 թվանշանը, ապա կստանանք 4 անգամ ավելի մեծ թիվ, քան աջից 4 կցագրելիս: Գտե՛ք սկզբնական թիվը:
2. 22222 թվին աջից կցագրեցին միննույն թվանշաններից կազմված ամենափոքր թիվն այնպես, որ ստացված թիվը բաժանվի 45-ի: Ո՞ր թիվը կցագրեցին:
3. Չորս մետաղադրամից մեկը կեղծ է: Ունենք ևս մեկ մետաղադրամ, որն իսկական է: Երկու կշռումով գտե՛ք կեղծ մետաղադրամը և պարզե՛ք՝ ծա՞նր է, թե՞ թեթև:
4. Չորս երեխայից յուրաքանչյուրը 7, 8 կամ 9 տարեկան է: Այն հարցին, թե նրանք միասին քանի տարեկան են, Անին պատասխանեց՝ 30, Գոռը՝ 31, Եվան՝ 32, Սոսը՝ 33: Քանի՞ տարեկան է նրանցից յուրաքանչյուրը, եթե հայտնի է, որ միայն 7 տարեկաններն են սխալ հաշվում:
5. Գտե՛ք  $x$  և  $y$  բնական թվերը, եթե հայտնի է որ, դրանց քառակուսիների տարբերությունը հավասար է 76-ի:
6. Երբ խնձորը 10%-ով էժանացրին, օրվա վաճառքը մեծացավ 20%-ով: Քանի՞ տոկոսով ավելացավ օրվա վաճառքից ստացված գումարը:
  7. Սեղանին երեք կույտ ընկույզ կար: Երբ առաջին քայլում՝ առաջին կույտում եղած ընկույզների կեսը լցրին երկրորդի վրա, երկրորդ քայլում՝ երկրորդում ստացվածի երրորդ մասը՝ երրորդի վրա, երրորդ քայլում՝ երրորդում ստացվածի քառորդ մասը՝ առաջինի վրա, ապա յուրաքանչյուր կույտում ստացվեց 42 ընկույզ: Սկզբում քանի՞ ընկույզ կար յուրաքանչյուր կույտում:
  8. Եռանկյունը տրոհել երեք մասի այնպես, որ ստացված մասերը վերադասավորելով հնարավոր լինի կազմել ուղղանկյուն:
  9. Ուղղանկյուն սեղանի մեծ սրունքը 17 սմ է, իսկ ներգծած շրջանագծի շառավիղը՝ 4 սմ: Գտե՛ք սեղանի պարագիծը:
  10. ABCD զուգահեռագծի AC անկյունագծի վրա վերցրած O կետից զուգահեռագծի կողմերին տարված զուգահեռ ուղիղները զուգահեռագծի AB, BC, CD և AD կողմերը հատում է համապատասխանաբար M, N, E և K կետերում: Ապացուցե՛ք, որ MBNO և KOED զուգահեռագծերի մակերեսները հավասար են